

Էկոլոգիական հետքի հաշվարկ

Անհրաժեշտ է աղյուսակի միջոցով սովորողներին բացատրել էկոլոգիական հետքի թվային արժեքի ստացման հետևյալ ուղին.

- աղյուսակի Ձեր կենսակերպին վերաբերվող տողերի հաշվարկային միավորների գումարային արժեքը բաժանել 100-ի, ստացված թիվը կներկայացնի Ձեր էկոլոգիական հետքը Գիա-ով:
- Մինչև 500 000 բնակչություն ունեցող բնակավայրերի համար Գիա-ի այդ արժեքը պետք է բազմապատկել 1-ով, իսկ դրանից ավելի բնակչությամբ բնակավայրի դեպքում 2-ով:
- Այնուհետև Գիա-ի ստացված այդ տվյալը պետք է բաժանել 1,75-ի (սպառումը համարժեք է 1 երկրագնդի կարողությանը):
- Եթե ստացված տվյալը փոքր է 1,75-ից ձեր կենսակերպի ապահովման համար դուք բավարարվում եք 1 երկրագնդի հնարավորություններով, իսկ 1,75-ից ավել արդյունքի դեպքում՝ ավել:

Աղյուսակ 6.1 Էկոլոգիական հետքի հաշվարկ

(տվյալների աղբյուրը՝ Global Footprint Network):

Միավորի համարը	Հաշվարկի միավորի անվանումը, տեսակը, քանակը	Հաշվարկային միավորի արժեքը
1	Բնակարան	+5
2	Ընդարձակ բնակարան	+7
3	1 հարկանի առանձնատուն	+13
4	2 հարկանի առանձնատուն	+25
	1-4 հարկերի ձեզ համապատասխանող արժեքը բաժանել բնակարանի բնակիչների թվաքանակի վրա	
1	Ձեր բնակարանը ջեռուցվում է ածխաջրածնային վառելիքով (նավթ, բնական գազ, ածուխ)	+50
2	Ձեր բնակարանը ջեռուցվում է էներգիայի այլընդրանքային աղբյուրներից (քամու, արեգակի)	+2
3	Ձեր սպառած էներգիան արտադրվում է ածխաջրային վառելիքի այրումից	+75
4	Ձեր բնակարանի ջեռուցումը կարգավորվում է ըստ եղանակային պայմանների	-10
5	Տանը ձմռան ժամանակահատվածում օգտագործում եք տաք հագուստ և հաստ վերմակ	-5
6	Տանից կամ սենյակից դուրս գալիս անջատում եք լույսը և էլեկտրասարքերը	-10
7	Տվյալ պահին չօգտագործվող սարքերը դուք մշտապես	-10

	անջատում եք էլեկտրասնուցումից	
	Տրանսպորտ	
1	Դպրոց եք գնում ուղքով	+3
2	Դպրոց եք գնում հասարակական տրանսպորտով	+25
3	Դպրոց եք գնում հեծանիվով	+5
4	Դպրոց եք գնում թեթև մարդատար մեքենայով	+45
5	Դպրոց եք գնում խոշոր կամ ծանր մեքենայով	+75
6	Այս տարի արձակուրդին օգտվել եք օդանավից	+85
7	Այս տարի արձակուրդին օգտվել եք գնացքից (մինչև 12 ժամ)	+10
8	Այս տարի արձակուրդին օգտվել եք գնացքից (12 ժամից ավելի)	+20
	Սնունդ և հիգիենա	
1	Գնում և օգտագործում եք միայն թարմ սննդամթերք	+5
2	Պահածոյացված սնունդ գնելիս նախապատվությունը տալիս եք տեղականին	+10
3	Դուք նախընտրում եք կիսապատրաստված սնունդ, կամ այն պատրաստում եք ինքներդ	+14
4	Դուք նախընտրում եք մսի սպառումը շաբաթական 3-4 անգամ	+50
5	Դուք նախընտրում եք մսի ամենօրյա սպառում	+85
6	Դուք նախընտրում եք բանջարեղենային սնունդ	+30
7	Նախընտրում եք ամենօրյա լոգանք վաննայում	+14
8	Նախընտրում եք շաբաթական 2-3 անգամյա լոգանք վաննայում	+2
9	Ամենօրյա լոգանք ընդունում եք միայն ցնցուղով	+4
10	Խմելու ջուրը օգտագործում եք նաև տնամերձ պարտեզը ոռոգելու համար	+10
11	Մշտապես գնում եք գրքեր ընթերցման համար	+2
12	Գրքերը վերցնում եք գրադարանից	-2
13	Ձեր գնած կամ գրադարանից վերցված գրքերը կարդում են նաև այլ մարդիկ	+5
	Կենցաղ	
1	Կենցաղային աղբի կուտակվող ծավալների աճի պատճառով ավելացնել	+100
2	Ապակե տարաները կանոնավոր հանձնում եք	-10
3	Կենցաղային աղբը տեսակավորում եք և ընտրում թափոնատուփը	-15
4	Օգտագործում եք սննդամթերքի մնացորդների առանձին թափոնաարկղ	-5
5	Փաթեթավորումը օգտագործում եք բազմակի անգամ	-15
6	Գնումների համար օգտագործում եք թղթե տարաներ	-10